

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի հունիսի 24-ի ՀՕ-137 օրենքի 18.-րդ հոդվածի 2-րդ մասում՝ <<նախատեսվել պետական լիազորված մարմնի,>> բառերից հետո լրացնել <<անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի>> բառերը, նույն մասում <<նախատեսման դեպքում պետական լիազորված մարմնի>> բառերից հետո լրացնել <<անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի>> բառերը, <<բացառապես>> բառից հետո <<պետական լիազորված մարմնի աշխատակիցների>> բառերը փոխարինել <<համապատասխանաբար՝ պետական լիազորված մարմնի և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի աշխատակիցների>> բառերով, իսկ <<օգտագործվում են պետական լիազորված մարմնի ղեկավարի>> բառերը փոխարինել <<օգտագործվում են համապատասխանաբար՝ պետական լիազորված մարմնի ղեկավարի և անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի ղեկավարի>> բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

<<ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ >> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ <<ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՈՒՄ ԱՐԿԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	Նախագծի հոդված	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1. ՀՀ ԱԺ պատգամավորներ Ա.Հովհաննիսյան, Ա.Մինասյան, Լ.Ավետերյան	<<Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքում փոփոխություն ներ և լրացումներ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագծի Հոդված 1-ին 2-րդ կետ, 4-րդ կետ, 7-րդ կետ	- Առաջարկվել է որակավորման վկայականի գործողության կասեցման վերաբերյալ հրամանը դատական կարգով բողոքարկելու հնարավորություն ընծեռել: - Առաջարկվել է 4-րդ կետում` ներկայացված վկայականի գործողության դադարեցման հիմքերի ա) ենթակետը խմբագրել:	Ընդունվել է: Ավելին, ոչ միայն վկայականի գործողության կասեցման, այլև դադարեցման դեպքում բողոքարկելու հնարավորություն ընծեռնելու նպատակով խմագրվել է նախագծի 1-ին հոդվածի 2)-րդ կետի 6-րդ ենթակետը` նախատեսելով վկայականի գործողության կասեցման, դադարեցման հրամանի բողոքարկման կարգը սահմանել << կառավարության կողմից: Ընդունվել և խմբագրվել է:
2. ՀՀ ԱԺ պատգամավոր Ա.Մինասյան	Հոդված 1-ին 3) կետ	- <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է, որ այս ֆոնդերի ստեղծման կարգը սահմանվում է օրենքով, սակայն Ձեր կողմից ներկայացված փոփոխությունը չի նախատեսում ձևավորման կարգ, միայն նշվում է, որ այդպիսի ֆոնդ պետք է լինի: Հետևաբար, ինչպես պետք է կատարվեն այդ հատկացումները և արդյոք առաջնահերթ է համարվում խրախուսման ֆոնդի ձևավորումը, նոր մյուսներինը:	Խրախուսման ֆոնդի ձևավորումը նախատեսված է նախագծում, որի համաձայն համակարգի աշխատողների խրախուսման ֆոնդի չափը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի տարեկան ֆոնդը: Միաժամանակ <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվում է, որ խրախուսման միջոցներն օգտագործվում են անշարժ գույքի պետական միասնական կադաստրի համակարգի ղեկավարի սահմանած կարգով: Խրախուսման և պահուստային ֆոնդերի ձևավորման մասով հերթականության կամ առաջնահերթության չափանիշներ չեն կարող գործել, քանի որ դրանք ձևավորվում են կադաստրի համակարգի

			ընդհանուր բյուջեի շրջանակներում: Պահուստային ֆոնդը նախատեսել է սեփականատերերին կամ օգտագործողներին պատճառված վնասի փոխհատուցման համար, ի դեպ յուրաքանչյուր տարի համակարգի բյուջեում այն նախատեսվում է 5 մլն դրամի չափով:
3. ՀՀ ԱԺ պատգամավոր Լ.Ալավերդյան	Օրենքի նախագիծ	Նախագծով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել 2011թ. հունիսի 23-ի ՀՀ օրենքում, որը պետք է ուժի մեջ մտնի 2012թ. հունվարի 1-ից: Այսինքն՝ առաջարկվող նախագծով հղում է կատարվում և հիշատակվում է դեռ ուժի մեջ չմտած իրավական ակտը:	Նախագծի 1-ին հոդվածը խմբագրվել է, կարգավորումները իրականացվել են «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորման շրջանակներում: